«ԳԱՋ» ՓԲԸ

ք.Երևան, Դավիթ Բեկի 87
Հեռ.: +37496666656
էլ.փոստ: levonavetisyan1987@gmail.com

«24» փետրվարի 2023թ.

ՀՀ շրջակա միջավայրի նախարար
պարոն Հ. Սիմիդյանին

Հարգելի պարոն նախարար

«Գաջ» ՓԲ ընկերությունը 2020 թվականի հունիսի 6-ին ստացել է Գաջահանի գիպսի հանքավայրի ՈՇԱԹ-29/621 ընդերքօգտագործման թույլտվությունը:

Հանքավայրի շահագործման բնապահպանական կառավարման պլանով «Գաջ» ՓԲ ընկերությունը նախատեսել է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ,
2. լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ,
3. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ արտադրական հրապարակի տարածքում,
4. կուտակված հողաբուսական շերտի ֆիզիկա-ագրոքիմիական հատկությունների ուսումնասիրություն:

2022 թվականի ընթացքում «Գաջ» ՓԲ ընկերության կողմից օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ չեն կատարվել, ինչի հետ կապված եռամսյակը մեկ անգամ դիտարկվել է միայն հանքի տարածքում փոշու ֆոնային կոնցենտրացիան :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐԱՆ
Մուտք No 21-4580
«24» 02 2023թ.

Ստորև ներկայացնում եմ 2022 թվականի ընթացքում ընկերության կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքները՝ ըստ ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշման հավելված 2-ով սահմանված ձևաչափի:

«Գաջ» ՓԲԸ

տնօրեն՝ Ա. Ենգոյան

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՄՓՈՓ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մշտադիտարկումների օբյեկտը	Մշտադիտարկում-ների վայրը	Ցուցանիշը	Մշտադիտար-կումների տեսակը	Հաճախականու-թյունը	Միջինացված արդյունքը
1	2	3	4	5	6
Մթնոլորտային օդ	Բացահանք	Անօրգանական փոշի (SiO_2 20-70%)	Չափում ավտոմատ սարքով	Աշխատանքների ընթացքում, յուրաքանչյուր շաբաթ	0.86մգ/մ^3
Մակերևութային ջրեր	Նախատեսված չէ				
Ստորգետնյա ջրեր	Նախատեսված չէ				
Հողային ծածկույթ	Արտադրական հրապարակի տարածք	Նավթա-մթերքներ	Դիտարկում, նմուշարկում	2022 թվականի ընթացքում մեկ անգամ	2022 թվականին արտադրական հրապարակի հողերի մշտա-դիտարկում չի կատարվել, քանի որ արդյունա-հանման աշխատանքներ չեն իրականացվել
	Հողաբուսական շերտի լցակույտ	Քիմիական և ֆիզիկաքի-միական հատկություն-ներ	Նմուշարկում, լաբորատոր հետազոտություն	2022 թվականի ընթացքում մեկ անգամ	
Վայրի բնություն, կենսա-միջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ	Նախատեսված չէ				
Աղմուկ և թրթռում	Նախատեսված չէ				
Ոչ վտանգավոր թափոններ	Նախատեսված չէ				
Վառելանյութերի պահեստարաններ	Հանքավայրի տարածքում վառելանյութերի պահեստարաններ չկան				

1	2	3	4	5	6
Ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուց-վածքներ	Հանքավայրի տարածքում ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուցվածքներ չկան				
Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակ	Բոլոր սարքավորումները անցել են տարեկան տեխնիկական ստուգում				